ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի մարտի 14-16-ը ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Ալբերտ Բաբայան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Գործուղման վայրը՝ ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն)

Գործուղման ժամկետները՝ 14. 03. 2019- 16.03.2019

4. **Հրավիրող կողմը**

Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

«Եվրասիական տնտեսական միության տարածքում թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղների նկատմամբ գործողություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին» Համաձայնագրի նախագծի քննարկմանը բարձր ներկայացուցչական մակարդակով մասնակցություն, որի նպատակը Համաձայնագրի նախագծի վերջնական տարբերակի ընդունումն էր:

6. **Քննարկված թեմաները**

Համաձայնագրի ներպետական համաձայնեցումների ընթացքում ծագած խնդիրների շուրջ վերջնական համաձայնեցումների ձեռքբերում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հայկական կողմը վերստին կարևորեց Համաձայնագրի հնարավորինս արագ գործողության մեջ մտնելու հանգամանքը և համապատասխան ելույթում առաջարկեց ծագած որոշ խնդիրների լուծման նպատակով առաջնորդվել ԵԱՏՄ

անդամ պետությունների միջև կնքված այլ համաձայնագրերի փորձով և համանմանությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ի գիտություն ընդունվեց Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հայտարարությունը՝ Համաձայնագրի նախագծի փաստաթղթերի փաթեթը սահմանված կարգով ներպետական ստորագրման ներկայացնելու վերաբերյալ:

9. Գործուղվողը՝

Ալբերտ Բաբայան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

20.03.2019թ.